

ՃԵՅՄՍ ՄԻԼԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐՈՒՆ

Հ. Յ. Դ. Լիբանանի Հայ Դատի Յանձնախումբը խորապես ապրում է ձեյնս Միլլերի անակնկալ կորուստին համար: Միլլեր սպանությունը, երբ կր փորձեր միջապահին ընտանիքին ուշադրություն յանձնել այլ արդար դատ մը:

Մենք կորսնցուցինք մեծ բեմադրիչ մը եւ բարեկամ մը, որ մեծ նուիրում ունէր արդար դատերուն, մարդկութեան դատերուն նկատմամբ: Ան մէկն էր, որ կառչած կը մնար իր հաւատքներուն եւ չէր վախնար հետեւանքներէն:

Մենք պատիւը ունեցանք ծանօթանալու ձեյնսին, երբ ան կը նկարահանէր «Արմինիա» Տը Պիթերսը, մասնագիտական վաւերագրական ժապաւէն մը, որ լուսարձակի տակ կ'առնէ Թուրքիոյ եւ իր դաշնակիցներուն կողմէ 20րդ դարու առաջին Յեղասպանութեան Հայկական Յեղասպանութեան ուրացումը: Աշխարհի տարածքին հայկական բոլոր գաղութները շատ լաւ տպաւորուած էին ձեյնսի աշխատանքով եւ մասնաւոր՝ Հայկական Յեղասպանութեան մասին վաւերագրական ժապաւէն մը պատրաստելու իր որոշումով:

Չայն կորսնցնելով հայերը կորսնցուցին մեծ բարեկամ մը եւ Հայ Դատի պաշտպան մը, որ կը պայքարէր իրականութեան եւ արդարութեան համար:

Անկախած իր գործը պիտի մնայ պատգամ մը՝ բոլոր անոնց, որոնք կը մերժեն ճանաչել անհրաւում ժողովուրդներու իրաւունքները եւ կը շարունակեն ժխտել պատմական իրողութիւնները:

ձեյնսի յիշատակը պիտի մնայ մեր հոգիներուն եւ մտքերուն մէջ:

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ
ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆԾՆԱՆՈՒԹԻՄ

14 Մայիս 2003
Պէյրուս

Հ.Բ.Ը.Ս. - Հ.Ե.Ը. «ԱՆԴՐԱՆԻԿ» ՍՏԱՎՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԴՄԻՋՈՒՄ - 3

«ԵՐԷԿՈՒԱՆ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ՝ ԱՅՍՕՐ»

Կը ներկայացնէ՝

ԿԵՐ. ՆԵՐՄԵՍ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

Դիմացաբքի, 15 Մայիս 2003,

երեկոյեան ժամը 8:00ին,

Հ. Բ. Ը. Ս. «Տեմիրճեան» կեդրոն, Տրդ յարկ:

ԱՖՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE



- AT HOME
- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen
- We Also Provide
- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՑՈՒՑԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆԹՐՈՐ ԳՐԱՆԵՆԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ԵՆՈ. (021) 242558/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ԻՆՏԵՐԻԷԷ

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅԵՏ ՄԱՇՈՒ ԿԸ ՊԱՐԳԵԿԵՄՈՒՆ «ARMENIA: THE BETRAYED» ԺԱՊԱԿԵՆԻՆ ԸՆԹԱՆԱԿ՝ ՃԵՅՄՍ ՄԻԼԵՐԻ

Երէկ առաւօտ՝ 14 Մայիս 2003ին, Լոնտոնի մէջ տեղի ունեցաւ պաշտօնական յուղարկութիւնը պատկերասփիւռի «Պի. Պի. Սի.» կայանի հանրածանօթ թղթակից ձեյնս Միլլերի: Արդարեւ ձեյնս Միլլեր Պաղեստինի բռնագրաւեալ հողերուն վրայ, վաւերագրական ֆիլմի մը պատրաստութեան ընթացքին, հակամարտող ուժերու բախումին գոհ գնաց:

Ինչպէս ծանօթ է, անցեալ տարի ձեյնս Միլլեր վաւերագրական ժապաւէն մը պատրաստած էր Հայերու Յեղասպանութեան մասին «ARMENIA, THE BETRAYED» խորագրով: Ընթացող ընթացքին ու արդարութեան փնտրուող մարդկային կեանքի կարեւոր սկզբունքներէն մէկը նկատող եւ միջազգային գետնի վրայ Հայերու Յեղասպանութեան պատմական իրողութիւնը փաստող վաւերագրական այս ժապաւէնը մեծ աղմուկ ստեղծեց ու մեծ գնահատանքի արժանացաւ միջազգային շրջանակներէ ներս, բախելով բնականաբար թուրք պետութեան անմիջական եւ զօրեղ հակազդեցութեան: Յայտնեց, որ անցեալ տարի ֆիլմի պատրաստութեան ընթացքին նաեւ ան այցելած էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոսին եւ երկար հանդիպում մը ունեցած իր հետ, Անթիլիասի մայրավանքին մէջ:

Թաղման առիթով վեհապետ Հայրապետը ցաւակցական գիր մը լղեց, ուղղուած Միլլերի ընտանիքին, գործակիցներուն ու բարեկամներուն: Այստեղ թարգմանաբար կու տանք վեհապետ Հայրապետին ցաւակցական գիրը:

«ձեյնս Միլլերի ողբերգական մահը խոր ցաւ պատճառեց մեզի: Իր մահը մեծ կորուստ մըն է ոչ միայն անգլիական մամուլին, այլ նաեւ միջազգային տեղեկատուական ու լրատուական մարզին: Արդարեւ, այս մարզէն ներս Միլլեր իւրապատուկ տեղ մը գրաւեց իր կարեւոր ծնառայութիւններով ու մեծ իրազօրծումներով, յատկապէս վաւերագրական ժապաւէններու պատրաստութիւններով: Ինչպէս Լոնտոնի մէջ հրատարակուող «Ինտիմիտի» թերթը կ'ըսէ. «ձեյնս Միլլեր հսկայ արժէք ներկայացնող լրագրական մեծ ժառանգութիւն մը կը ձգէ իր ետին»:

«ձեյնս Միլլեր սովորական թղթակից մը չէր, խոր հաստք, հաստատ համոզում եւ յստակ տեսիլք ունեցող լրագրող մըն էր: Որպէս նկարող, գրող, լրագրող ու նկարահանման պատասխանատու անձ, ան երբ թափանի իշխանութեան տակ ապրող ժողովուրդին կեանքը կը նկարագրէր, երբ Քոստոլոյի նոր օրերու ցեղասպանութիւնը կը յայտնաբերէր, երբ Հայերու Յեղասպանութեան պատմական իրողութիւնը կը շեշտէր, իր միակ նպատակը ճշմարտութեան, արդարութեան ու փոխադարձ հասկացողութեան փնտրուողն էր: Իր վերջին վաւերագրական ժապաւէններէն մէկը՝ «ARMENIA: THE BETRAYED» պերճաբան վկայութիւն մըն է մարդկային ու բարոյական այն արժէքներուն ու սկզբունքներուն, որոնք բնորոշեցին գործը ձեյնս Միլլերին:

«Յիշեալ ֆիլմի պատրաստութեան ընթացքին ձեյնս Միլլեր Անթիլիասի կաթողիկոսարան եկաւ եւ ինծի հետ յատուկ հարցազրոյց մը ունեցաւ: Սոյն հարցազրոյցի ընթացքին իր հարցումներուն ընդմէջէն յստակ էր իր խոր համոզումը, թէ կարելի չէ ժողովուրդի մը հաւաքական իրողութիւնը անտեսել: Ան խորապէս համոզուած էր, թէ Յեղասպանութեան ճանաչումը ճամբայ կրնայ բանալ փոխադարձ հասկացողութեան: Յերկրէ Բիւն, որ Միլլերին հետ գործակցեցաւ ինչեւ ժապաւէնի պատրաստութեան ընթացքին, իր մասին հետեւեալը կը գրէ. «Ան անձնական թշնամութիւն չունէր Թուրքիոյ կամ թուրք ժողովուրդին նկատմամբ, սակայն ան վճռած էր դժուար հարցումներ արծարծել, ու ի պահանջել հարկին յստակ լեզու գործածել ի սէր ճշմարտութեան: Միլլեր չէր հաւատար երկրի մի մտեցումներու, ճշմարտութեան երկրի մի ներկայացման եւ երբեք այս գծով տեղի չէր տար նոյնիսկ պաշտօնական միջամտութիւններու ու յարձակումներու դիմաց:

«Հայ ժողովուրդը երբեք պիտի յիշուի ձեյնս Միլլերը, «ARMENIA: THE BETRAYED» ժապաւէնի գծով Հայերու Յեղասպանութեան պատմական ճշմարտութիւնը փնտրելու եւ զայն աշխարհին ներկայացնելու իր հաստատ յանձնարարութեան համար: Արդարեւ, յանձնարարութիւնը ճշմարտութեան նկատմամբ, կ'ենթադրէ քաջութիւն, որովհետեւ ներկայ աշխարհին մէջ այնպիսի զօրեղ ուժեր կան, որոնք երբեք պիտի չուզեն, որ ճշմարտութիւնը յայտնաբերուի: Եւ ի՞նչ ճակատագիր: Ընթացող ընթացքին փնտրուող ճանապարհին վրայ Միլլեր կորսնցուց իր կեանքը, Պաղեստինի գրաւեալ հողերուն վրայ: Այդ, կարելի չէ ուրանալ ճշմարտութիւնը: Կարելի չէ՛ ինչպէս Աստուածաշունչը կը հաստատէ. «Լոյսը գորուհի տակ պահել»: Եւ բոլոր անոնք որոնք իրենց կեանքը կը գոհեն ի խնդիր արդարութեան եւ ճշմարտութեան երբեք չեն մեռնիր. անոնք նահատակներ են:

Մենք որոշած էինք ձեյնս Միլլերը հրաւիրել յառաջիկայ Յունիստին Մեծի Տանն կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքը, զինք պարգեւատրելու համար իր քաջութեան, յանձնարարութեան եւ տեսլականին համար: Կ'ուզենք մեր պարտականութիւնը կատարել իր յուղարկութեան այս պահուն, յայտարարելով, թէ ձեյնս Միլլերը կը պարգեւատրենք մեր Ս. Աթոռին Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՈՒՆԻ շքանշանով, իբրեւ իրեն նկատմամբ մեր ունեցած սիրոյն, յարգանքին ու գնահատանքին շնորհիւ արտայայտութիւն:

Թող Աստուած օրհնէ իր յիշատակը, ու հոգեպէս զօրացնէ իր ընտանիքը, իր գործակիցները եւ բարեկամները»:

Մայրերու Տօնին Առիթով ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՇԱՆԴԵՍ հայրենի երգիչ եւ ջութակահար ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐԻԱՆ

Ընկերակցութեամբ՝ Մագո Պետրոսեանի եւ իր նուագախումբին Մասնակցութեամբ՝ հանրածանօթ երգիչ - երգչուհիներու եւ դերասաններու նաեւ՝ հաճելի անակնկալներ Մոնի եւ Խանդավառ մթնոլորտի մէջ, հայկական, ռուսական, քնչույական, արաբական եւ յունական յայտագիր

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 24 Մայիս 2003-ին, երեկոյեան ժամը 9:00-էն սկսեալ ճաշարան Al Amin-ի, մէջ Լուկիոս-Ճամիւռ, մայրողիի վրայ: • Տոմսերը ստանալու համար դիմել GEKA Records Դեռ.: 03/242685 եւ յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել՝ հետեւեալ թիւերուն 03/741230 - 03/666060 - 03/667687

البيروت
السوق
الفتح العربي
السفير
الاستقلال
المستقبل
الذبيح
النصار

14 Մայիսի լիբանանեան օրաթերթերը գլխաւորաբար անդրադարձած են Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմիի տեսակցութիւններուն, հանդիպումներուն եւ յատկապէս Մարպակի Աւանին մէջ իրենի պատի տեղի ունեցած ժողովրդային փառատօնին:

Թերթերը նաեւ լուսարձակի տակ առած են Ռիատի մէջ տեղի ունեցած ահաբեկչական պայթումը, որուն թիրախ դարձաւ օտարապետական երկու երէք բնակարանային համալիրներ. գործողութեան պատասխանատու թիւնը «Քայիտա» շարժումը:

«Լիուս» օրաթերթը գրած է, թէ Խաթեմիի Լիբանան այցելութեան երկրորդ օրը յատկանշուեցաւ համալսարանի եւ Մարպակի անհանգիստացողութեան մէջ տեղի ունեցած ընդունելութեամբ: Իրանի նախագահը կոչ ուղղեց շարքերու մտացման, նշած է օրաթերթը:

Ըստ «Մաֆի»-ի, Խաթեմի կը զօրակցի ՀՂԿ-պալլախի եւ կը պահանջէ պատրուակներ չձեռնարկելու Իսրայէլի: «Քիֆաի Արապի» դիտել տուած է, թէ վզուցանելով Ամերիկայի կողմէ շրջանին մէջ նոր տագնապներու յարաբերման գործընթացը, Խաթեմի յայտարարեց, որ Իրան կը յարգէ Լիբանանի մէջ տրուած որոշումները:

«ՎԱՆԱՅ ՁԱՅՆ»-Ի ԱՅՍՕՐՈՒՄ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- Ժամը 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- Ժամը 8:45 «Աստղեր»
- Ժամը 11:00 «Չաւախը երկ եւ այսօր»
- Ժամը 11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- Ժամը 12:00 «Մարտի 12»
- Ժամը 6:00 «Շայ երգաշարի»
- Ժամը 8:00 «Քնարային»

Խաթեմի կը տեսակցի Փաուրի հետ, իսկ Պուշկին ինտանայ իսրայէլի եւ հետապնդել յանցանքները:

«Մեուտական Արաբիա»-ն իր պատմութեան մէջ ամենէն վաղագ յարձակումին՝ 90 մեռեալ եւ 194 վիրաւորներ արձանագրելով, իսկ «Քայիտա» որդեգրեց գործողութիւնը:

Պուշկինը կ'արարեց, այս արարքները մեզ կը իշեցնեն, որ ահաբեկչութեան դէմ պայքարը տակաւին կը շարունակուի», գրած է «Տիւր» օրաթերթը:

«Մաֆի» դիտել տուած է, թէ Ռիատի պայթումը ահապանգի կը մատնէ Ռաշիկը: Նրա եւ կը վերակենդանացնէ Իրաքը բնագրաւելու անոր քայլին մասին եղած քննարկումները: Ըստ թերթին, Պուշկինը ձեռնարկեց «Քայիտա»-ի հետեւորդներուն կէսը, յայտարարելով, որ յարաբերութիւնն էր ու վերստին կը նշանակէ անմատուր ըլլալ թշնամիին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԿՈՄԻՏՏԱ» ՄԱՍՆԱԳԻՐ

ԸՆԹԱԿԱՆ ԸՆԹՐԻԷ

Դիմացաբքի, 15 Մայիս 2003ին, երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ, Բամագալիի «Կոմիտաս» ակումբին մէջ, Չոքաթ Էլ Պլաթ:

Կիցի հետ: Շարուն կը յայտարարէ. բնակեցման վայրերու գծով ամերիկեան սպանալիքներ գոյութիւն չունին: Փաուրի կը յայտարարէ. իսրայէլեան քարտէսի վերաբերեալ իր քաղաքականութիւնը՝ Գամալիսի մէջ պաղեստինեան կազմակերպութիւններու գործունէութեան վերաբերեալ:

Թերթին համաձայն, Ապու Մապէ Շաբաթ օր կը տեսակցի իսրայէլացի իր պաշտօնա-

կիցի հետ: Շարուն կը յայտարարէ. բնակեցման վայրերու գծով ամերիկեան սպանալիքներ գոյութիւն չունին: Փաուրի կը յայտարարէ. իսրայէլեան քարտէսի վերաբերեալ իր քաղաքականութիւնը՝ Գամալիսի մէջ պաղեստինեան կազմակերպութիւններու գործունէութեան վերաբերեալ:

«Տիւր» նշած է, թէ Հաթիմ կոչ կ'ուղղէ բոլոր իրաքցիները ներկայացնող կառավարութիւնը կ'ապստամբէ, իսկ Հիլալի մէջ հաւաքական գերեզման մը կը յայտնաբերուի:

«Մաֆի» դիտել տուած է, թէ 14 իսրայէլացի վիրաւորներ պատճառած պաղեստինեան ռմբակոծման տեղ, իսրայէլեան բանակը ներխուժեց Խան Եունիսի տասնեակներով վիրաւորներ պատճառեց: «Լիուս»-ի համաձայն, Խան Եունիսի ճամբան կը փակէ Ռաշիկը: Իսրայէլեան «Քայիտա»-ի հետեւորդներուն կէսը, յայտարարելով, որ յարաբերութիւնն էր ու վերստին կը նշանակէ անմատուր ըլլալ թշնամիին:

ՆԱՍԱԿ՝ ՀԱՅՐԵՆԻՔԵՆ

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ

Սան Ֆրանսիսկոյ գեղեցիկ քաղաքէն հրաշալի Երեւան փոխադրուեցաւ Մանուկ Ակեանը: Երկու քաղաքները նման ածականներով համեմատելը բնական է: Եթէ Երեւանը հրաշալի չըլլար, խելքը գլուխը, գործով ապահովուած, Սան Ֆրանսիսկոյ փայլքը վայելելու ամէն կարելիութիւն ունեցող մարդը այստեղ հաստատուելու, այստեղ նոր գործ փնտռելու որոշում չէր տար:

Գիտեմ, որ Երեւանէն ամէն զնով փախչողները, օտար ափեր բախտ ու երջանկութիւն, աշխատանք ու ապահովութիւն փնտռողները տակաւին շատ են, ու դժուար է Հայաստանի բնակչութեան նախկին թիւը վերականգնել: Մանուկի պէս տղաներու ներգաղթով, սակայն կարելի է հաստատ կերպով պնդել, որ դէպի երկիր հոսքը, որքան ալ վտիտ, կայուն շարունակութիւն ունի արդէն:

Անցեալ շաբաթ Լիբանանէ հիւ-զիս փնտռողներու հարցումներու տարափով բաւական յոգեբեցուցին Հայաստան փոխադրուելու մասին մտածող առնուազն հինգ հոգի, որոնցմէ մէկը, տարբեր մտահոգութիւններով արդէն գործնական առաջին քայլերը առնել սկսաւ: Լիբանան յաճախ այցելելու առիթներ ունեցած եմ, սակայն առաջին անգամ էր, որ այսպիսի հարցերով մարդիկ կը դիմէին ինծի: Վստահ եմ, որ նման հարցումներով ուրիշ հասցէներու դիմողներ եղած են անցեալին, ես կ'ուզեմ պարզապէս վիճակագրութեան տուեալները ամբողջացնել:

Ինծի համար հետաքրքրական փաստ էր, որ ես Լիբանանցի իմ ընկերներու նոյնքան ինքնավար տահալութեամբ չկրցայ քաջալերել Հայաստան փոխադրուելու հարցով: Ընտանիքի տէր մարդիկ էին ու ես չէի կրնար երաշխաւորել, որ անոնք պիտի կրնային իրենց կեանքին համար անհրաժեշտ պայմանները ստեղծել: Հայրենիքին մէջ: Ամէնէն դժուար պարագան է, այն մարդոց, որոնք արհեստ չունին, իրենց նիւթական միջոցները սահմանափակ են, մտաւորական աշխատանքի մարդիկ են, ու այդ իսկ բերուածով, հաւանաբար, ամէնէն ուժեղ փափաքը ունին հայրենիք փոխադրուելու: Կը հասկնամ անոնց որոնք գրեթէ ինքնուրուի կը ցաւիմ, որ մեր պետութիւնը տակաւին անկարող է այդ արժեքները խաւին համար յատուկ միջոցներ ստեղծել, որ պէտք է կարենան արժանապատիւ կեանք ապրիլ իրենց երագած հայրենիքին մէջ:

Արհեստաւորի ու երկրագործի համար համեմատաբար աւելի դիւրին է, մանաւանդ եթէ զբամազու մըն ալ ըրէ իր հետ թէ կուզ փոքր, բնակարանային հարց լուծելու, արհեստանոցը կարգաւորելու, հողամաս մը կամ կենդանիներ գնելու՝ դոնէ որք: Ժամանակ մը ապրուստի միջոց ապահովելու պարտադրանքին տակ չըլլալու համար: Շատ կարճ միջոցի մը մէջ այս մարդիկը կրնան հունակութիւն իրենց կեանքը, կազմակերպել իրենց աշխատանքն ու դիմագրաւել նոր միջավայրի բոլոր դժուարութիւններն ու մարտահրաւերները:

Մանուկի պէս տղաները, եւ կարծես արեւմտեան ափերէն այստեղ հաստատուողներուն մէկ կարեւոր մասը, աւելի լայն կարելիութիւններով ճամբայ կ'ելլեն: Յաճախ այդ տղաներուն բարոյապէս եւ մանաւանդ նիւթապէս թիկունք կը կանգնին իրենց ընկերներն ու ընտանեկան շրջանակը, որոնք կարծես իրենց սեփական երազներուն իրականացումը կ'ուզեն տեսնել իրենց ընկերող կամ ազգականին կեանքին ընդմէջէն:

Հրաշալի Երեւանի մէջ ապրելու համար, սակայն, այլեւ շատ քիչ է նման միջոցներով բաւարարուելը: Կեանքը արդէն բաւական սղած է: Մանուկը, օրինակ, տուն վարձելու ածապարանքին մէջ, հաճախ ամիսով ամսական ինը հարիւր տոլար վարձքով ընդարձակ յարկաբաժին մը գտաւ քաղաքի կեդրոնական մասին մէջ, նոր բարձրացած շէնքի մը մէջ: Անպարտաբար յաղթահարել է ետք, ստոր կէս գինով եւ կէս չափով ուրիշ յարկաբաժին մը ապահովեց, դարձեալ կեդրոնին մէջ, ուր կը փոխադրուի երկու ամիսէն: Սակայն, այդ ալ սուղ կրնայ նկատուիլ շատերու համար: Բնակարանային գիններու այս սղութեան պատճառն ալ անշուշտ սփիւռքահայերու անդադրում հետաքրքրութիւնն է Երեւանի մէջ տուն գնելու, կամ պարզապէս Հայաստան զբօսաշրջական այցելութեան ընթացքին վարձքով տան մը մէջ կենալու ուղղութեամբ: Այդ կը նշանակէ, որ բնակարանայինութեան գործը տակաւին առողջ թափով կը զարգանայ՝ իր հետ զարգացնելով առընչուող բազմաթիւ ոլորտներ: Զբօսաշրջութիւնը եւ համապատասխան ծառայութեան ոլորտներն ալ կը շարունակեն վերելք ապրիլ:

Ուրեմն, բարի գալուստ այս եւ այլ ոլորտներուն մէջ աշխատանք կատարելու կարելիութիւն ունեցող ներգաղթողներուն, բարի գալուստ այդ ոլորտներուն զարգացման նպաստող սիրելի այցելուներուն:

ԱՐԾ ՊՈՂՈՒԿԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՋ

Մեր քաղաքական գործիչներուն ճնշող մեծամասնութիւնը կը ղեկավարուի իւրայատուկ «կենսափիլիսոփայութեամբ» մը, որուն առանցքին մէջ շատ պարզ ճշմարտութիւն մը կայ: քաղաքականութիւնը սովորական արհեստ է, առեւտուր կամ տնտեսական կեանքի ուրիշ մարդ մը:

Տարբերութիւնը միայն այն է, որ գործարարութեան մէջ անձնական շահն է, որ հարկէս կու գայ իրրեւ բնական, մրցակցութիւնը կարգաւորող եւ այդ համակարգը առողջացնող գործօն, իսկ քաղաքականութեան մէջ ան կը դառնա իմաստին եւ նպատակներուն ձեւախելումը պիտի յանգեցնէ անոր, որ քաղաքականութեամբ զբաղող կառույցները կը դառնան ժողովուրդին հետ կարճ ժամկետով կնքուող գործարքներու զբաւեանակներ՝ յար եւ նման երջանկուն կայրեակ Օսթափ Պենտոնի կոտորուիւնը ընդունող ձեռնարկութեան:

Քաղաքականութեամբ զբաղող մեր կառույցներուն մեծամասնութիւնը քաղաքականութեան իմաստը կը մեկնաբանէ սեփական փակ հաստատութեան պահանջները բաւարարելու խնդիրին տեսնելով: Այդ պատճառով մեր քաղաքական կեանքը ինքնաբաւ կամ ինքնաբաւութեան ձգտող համակարգիւն իմանալար մըն է:

Անոնցմէ առաջին դասակարգումին մէջ կը մտնեն այն բոլոր ուժերը, որոնք սեփական գործունէութեան համար հայրենիքին կ'ուզեն ընդունելու: Այսինքն իրենց «հարկէս կու գայ իրրեւ» միջոցով: Ասոր իմաստին է նպատակներուն ձեւախելումը պիտի յանգեցնէ անոր, որ քաղաքականութեամբ զբաղող կառույցները կը դառնան ժողովուրդին հետ կարճ ժամկետով կնքուող գործարքներու զբաւեանակներ՝ յար եւ նման երջանկուն կայրեակ Օսթափ Պենտոնի կոտորուիւնը ընդունող ձեռնարկութեան:

Ապահովել անոնց պահանջները՝ իրենց «հարկէս կու գայ իրրեւ» միջոցով: Ժողովուրդը անոնց համար ցուցահանդէսի սովորական այցելու մըն է, որուն պէտք է մատուցել տեսակ մը կտաւ՝ ոչ մէկ նշանակութիւն տալով վերջինիս վրայ պատկերուած նկարի իմաստին եւ կիրառական նշանակութեան:

Կարեւորը այն է, որ իրենք ունին տուեալ ցուցահանդէսին մէջ սեփական կտանները կախելու իրաւունք, այսինքն՝ ներկայութիւն են ու խաղի մասնակից: Մնացեալը կախեալ է անկէ, թէ ի՞նչ կը թելադրեն սեփական «հարկատուները»: Եթէ անոնց պէտք է կտաւի վրայ նկարել կատուններ կամ շուներ՝ կարելի է վարուել այնպէս, եթէ եղբիւրներ պէտք են, նոյնպէս հարց չկայ:

Այցելուի գեղադիտական ճաշակի ձեւաւորման խնդիր իրրեւ այդ պիտի ժողովուրդին հետ կարճ ժամկետով կնքուող գործարքներու զբաւեանակներ՝ յար եւ նման երջանկուն կայրեակ Օսթափ Պենտոնի կոտորուիւնը ընդունող ձեռնարկութեան:

Քաղաքականութեան միւս մասը կը ղեկավարուի այն գործիչներուն «Հայոց Աշխարհ» (Արեւմտահայերէս վերածուած)

կողմէ, որոնք ունին ինքնահաստատման խնդիր: Այստեղ առաջին գիծ կը մղուի աժան տպաւորութեան, արդիւնքի, առաջնայականացած կերպարներու ձեւաւորման խնդիրը: Միեւնոյն ժամանակ, ասպարէզ նետուող գաղափարներուն, առաջարկներուն, լուրերուն ու յայտարարութիւններուն ճշմարտացիութիւնը ոչ մէկ նշանակութիւն ունի կարեւոր անոնց անմիջական արդիւնքն է, արտաքին տպաւորութիւնը: Այդ մէկը կ'ապահովէ ջուրի երեսին մնալու եւ ինքնաբաւութեան ձգտելու կարելիութեան ձեւաւորման ձգտողները:

Եւ առաջին, եւ երկրորդ դասակարգումներուն պատկանող քաղաքական գործիչները պատրաստ են որեւէ առեւտուրի ու փոխ զիջումի մէջ մտնել իրարու հետ՝ քաղաքական սկզբունքներուն (որոնք ցուցահանդէսի համար են միայն) եւ ժողովուրդին տրուած խոստումներուն հաշուոյն:

Այնպէս մը կ'ըլլայ, որ անոնց համար քաղաքականութիւնը միայն ապրելու ձեւ է, որ պէտք է որքան կարելի է շատ իրաւունքներ եւ քիչ պատասխանատուութիւն ունենալ:

ԳԵՈՐԳ ՆՈՒԳԻՆԵԱՆ

«Հայոց Աշխարհ» (Արեւմտահայերէս վերածուած)

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենյակը:

ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒՄԸ ԶԵՌՆԱՐԿ

Կազմակերպութեամբ՝ **Շ. Յ. Դ. ԱՂԲԱԼԵԱՆ ԿՈՄԻՏԵ** Գործակցութեամբ՝ **ԼԵՄԻ «Հայաստան» մասնաձեռնի** եւ «Աղբալեան» Պատանեկան Միութեան վարչութիւններուն **Բանախօս՝ ԸՆԿ. ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆ** Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 16 Մայիս 2003, երկուշաբթի 8:30ից, «Աղբալեան»-Մ. Ը. Մ.» համալիրին մէջ:

ԱԿՆԱՐԿ

«ԱՄԽ, ԱՅՍ ԱՆՏԱՐԲԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆԸ...»

Մեր մօտ կարծէք սովորութիւն դարձած է ամէն առիթի ժողովուրդին «անտարբերութիւն»ը խարազանելով՝ պատասխանատուութիւններէ խուսափել: Կը կազմակերպուին մշակութային ձեռնարկներ, որոնց յայտագիրը անցնող հարկւրամեակին մէջ ոչ մէկ զարգացում կրած է, այս երեւոյթը այնքան մը շեշտուած է, որ 1900ականներու սկիզբը Պոլսոյ մէջ կատարուած հանդիսութեան մը յայտագիրը դժուար է զանգագնել 21րդ դարու հայուն մատուցուած յայտագիրէն:

Խոհագիրը միեւնոյնն է. բանախօս մը, կամ եթէ շատ «բախտաւոր» են ներկայները՝ բանախօսներ, բեմ կը բարձրացան եւ կը կարողանային տարիներ առաջ գրուած, եւ լաւագոյն պարագային դոյզն ինչ պատշաճեցուցներու ենթարկուած դասախօսութիւն մը, որ նախապէս կարողացած է այլ բեմերէ, բայց ներկայներու ակազմից նոր կը բուռի, որովհետեւ այդ նախկին ձեռնարկներու ալ արդէն մտիկ ընող չկար... Ապա ամուլնըրդը բեմ կը բարձրացան եւ ներկայներուն կը հրամայէ «ես իմ անուշ Հայաստանի»ն, կամ ալ, եթէ *ռեփերթուար* աւելի «նոխ» է, Վարուժան մը կամ Սիւսանի մը «կը սահեցընէ»՝ կարծէք պնդելով, թէ հայ գրականութեան գոհարները մատի վրայ կը համբուին: Եւ վերջապէս, «մշակութային համ» տալու համար բեմ կը բարձրացան յաշնակահարը... Չմոռնալք անշուշտ բացման եւ փակման խօսքերը, որոնք գրուած են հայերէն գրել չգիտցողներու կողմէ եւ կը կարողացուին... կարող չգիտցողներուն կողմէ:

Մափահարութիւն: Ողջ մնալ: Վերադառնալ տուն եւ քրքրէն յայտագիր մը դիտելը...

Յաջող օր դժգոհութիւններ կը լսենք կազմակերպիչներէն, թէ ներկայներու թիւը փոքր էր, թէ անոնց մեծ մասը տարեք մարդիկ էին, եւ թէ հանր ծափահարութիւններուն միջեւ քուցի կ'անցնէին: Կազմակերպողները կը գանգատին, թէ հայ մշակույթը յարգող չէ մնացած, սիրող չէ մնացած, ամէն մարդ միայն «Մարտոնալազ» կ'երթայ այս օրերուն, երիտասարդութիւնը միայն «սեքս»ով է համարուող հետաքրքրուած է, ափսոս եղեւնի մեր գոհերուն, Կոմիտասին, Նարեկացիին, Մեսրոպ Մաշտոցիին, որոնք իրենց կեանքը եւ աշխիւ լոյսը «հասցուցին» անպատկառ եւ անտարբեր նոր սերունդին համար:

Այսպէս, կազմակերպողը «մարտ» դուրս կու գայ: Անոյ խիղճը հանգիստ է. բարւ իր պարտականութիւնը...

Մեղաւոր է երիտասարդութիւնը...

Բայց եկուր տես, որ երիտասարդութիւնը ծանձրացած է միեւնոյն ճաշ տիւ ու գիշեր ուտելէ, ինքզինք խաբուած կը գգայ, երբ մարդիկ բեմ կը բարձրացան եւ լոզունգներով կ'ողողեն սրահը, մշակույթ ու հայապահպանում կը բացագանչեն, եւ այնուհետեւ, «Լիւսէ»ի մը ձեռնարկներուն խրախնայներին օր մը առաջ պատկերասփորում միայն ձանձի համբարին մասին կը խօսին «Հայ սոսայիթի»ի իրենց բարեկամներուն հետ:

Ոչ մէկը կը խորհի յաւարը այսպէսլու փոխարէն մոմ մը վառելու մասին:

Ոչ մէկը կը մտածէ երիտասարդութիւնը ներքաշելու մասին:

Ամէն մարդ զբաղած է «անտարբերութիւն» հոլովելով:

Բայց յայտնի չէ՞ արդեօք, թէ որոնք են յսկական անտարբերները...

ԽԱԶԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

www.hamazkayin.com



FUEL CARDի Դպրոցական Ֆոնտը 2002-2003 տարեշրջանի

Կրթանպաստ տրամադրուած է մեծ թիւով հայ աշակերտներու Գործացեցէք FUEL CARDը եւ ձեր ներդրումը բերած կ'ըլլաք տնտեսական օգտաշատ ծրագիրներու իրականացման:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍՍՐԳԻՍԵԱՆ - Պուրծ Գամուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանտ»ի մօտ
- ▶ SPEED - Գանքաշ, Կալերի Իթքիստ
- ▶ ԳՍՅՎԱԿԱՆ ԿԱՅՐԱՆ - Կալուղա
- ▶ MALLAH - ՍՍՔիլիստ, Ալմրիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Գալոս Գալուստ
- ▶ MALLAH - Մալիմ
- ▶ MALLAH - Մալի Մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆի, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
- ▶ SAAD - Սար Միայնի
- ▶ SPEED - Նահր, «Փօօփօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապատէք

«ԱՉԴԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէ առնուազն օր մը առաջ, ՄԻՆՁԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՆ 5:00: ՄԱՀԱՋԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի միայն ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:



ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂԳԵՐ

Լիբանանեան կեանքի երևույթներ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԲԱԼԴՆԵՐՈՒ ԵՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

ԼԻԲԱՆԱՆ ԿԵ ԲԱՒԱՐԱՐՈՒԻ ԻՐ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒ ԳՌՆԵՐԸ ՔԱՆԻ ՄԸ ՕՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐՈՒՆ ԳԻՄԱՑ ՉՐԻ ԲԱՆԱԼՈՎ, ՄԻՆՉ ԱՆՈՆՑՄՈՎ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՈՂՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ ՉԳԱԼԻ ԵՏԳԱՐՉ Կ'ԱՐՉԱՆԱԳՐԷ

Եթէ քարերը կարենային խօսիլ, անոնք պիտի պատմէին այն պատմութիւնը, որուն իրենք ականատես իրենք մնացած են միայն: Անոնք պիտի պատմէին Լիբանանի մէջ ապրած զանազան մշակութիւններու եւ ժողովուրդներու հազարաւոր տարիներու պատմութիւնը: Պիտի ըսէին, թէ որոնք ապրած են իրենց մէջ եւ ինչպիսի դէպքեր ու իրադարձութիւններ տեղի ունեցած են անոնց շուրջը:

Այդ քարերէն ոմանց չէ խնայած ժամանակը, բնութիւնը, պատերազմն ու կողոպուտը, իսկ ուրիշները ալ բոլորին ականատես ըլլալով հանդերձ, կարողացած են դիմանալ ու հասնիլ յառաջիկայ սերունդներուն:

Լիբանան համայնքներու ու մշակութիւններու համախմբման վայր ըլլալու կողքին, իր մէջ կ'ամփոփէ զանազան ժողովուրդներու հնագիտական վայրերը, մշակութային աւանդը, հնութիւնները, սրբավայրերը, պալատները եւ այլն:



Իւրաքանչիւր երկիր ունի իր իւրաքանչիւրութիւնը, որ գինք ալ երկիրներէ տարբերելու կողքին անոր կու տայ նաեւ արժէք ու գրաւչութիւն: Կան երկիրներ, որոնց բնութիւնը կը հանդիսանայ անոնց քաղաքական տրեւելը, իսկ Լիբանանի պարագային այս հարստութիւնը եւ զբօսաշրջիկներուն հետաքրքրութիւնը գրաւողը հնագիտական իւրաքանչիւր ու բազմաթիւ վայրերն են: Վերջինները ունին բնական,

պատմական, մշակութային, աւանդական զբօսաշրջային, ինչպէս նաեւ առեւտրական արժէք, որովհետեւ անոնց այցելելու համար Լիբանան եկած զբօսաշրջիկները մեծ ներդրում կը կատարեն Լիբանանի տնտեսութեան մէջ:

Լիբանանի մայրաքաղաք Պէյրութը ինքնին կը նկատուի մշակութային կեդրոն մը: Ան քանի մը անգամ փոփոխուած է եւ անոր ընդերքին մէջ կը գտնուին հնագիտական

խանատուներ 16 Ապրիլը հռչակեցին մշակութային աւանդի միջազգային օր, իսկ 18 Մայիսը՝ Թանգարաններու Միջազգային Օրը: Այս առիթով Լիբանանի ձեռնարկները ու տօնակատարութիւնները կազմակերպելու փոխարէն այս տարի քանի մը օրուան համար թանգարան ու հնագիտական վայրեր մուտքը ձրի յայտարարեց:

Լիբանանի հնագիտական վայրերու պահպանման աշխատանքը սկսած է 1861ին՝ Ֆրանսացիներուն

յին աւանդ ներկայացնող կառոյցներ:

Սակայն այս մէկը բաւարար չէ այդ վայրերուն արժէքի պահպանման համար, որովհետեւ հին ըլլալու պատճառով այդ կատարութիւնները կը կարօտին խնամքի, հետեւողական նորոգութեան ու հնութիւններու պահպանման:

Այս հոգատարութեան բացակայութիւնը նկատելի է Լիբանանի մէջ, մանաւանդ կարգ մը հնագիտական վայրերու պարագային, որոնք «Երկրորդական» կը նկատուին ու հակառակ անոնց ունեցած իւրաքանչիւր արժէքին, շրջանէն «հեռու» գտնուելու պատճառով կ'անտեսուին:

Այդ վայրերուն կարգին կարելի է նշել այն սրբավայրերն ու ճգնաբանները, որոնք կը գտնուին լեռներու մէջ, անոնց լանջին, եւ որոնք իսկական հրաշալիքներ կը նկատուին: Պատասխանատուները այդ կառոյցները երկրորդական նկատելով մեծ ուշադրութիւն չեն ընծայեր անոնց եւ կը ձգեն իրենց ճակատագրին:

Չմարան տեղատարափան ձեռքներուն ու սահմաններուն պատճառով կարգ մը հնագիտական վայրեր վնասուեցան ու փոշի եկան:

Միջազգային կազմակերպութիւններուն կողմէ տարուած հոգատարութեան աշխատանքները գինին բարձր ըլլալուն պատճառով, Լիբանանի պետութիւնը ինք ստանձնած է անոնց խնամքը, զբօսաշրջութեան նախարարութեան խողովակով:

Նախարարութիւնը իր կարգին այս պատասխանատուութիւնը յանձնած է քաղաքապետութիւններուն, որոնք պէտք է գործակցին կազմակերպչական ու հնագիտական վայրերուն յանձնախումբներուն հետ: Պետութեան կարծիքով, քաղաքապետութիւնները եւս իրենց ներդրումը պէտք է ունենան այդ վայրերու խնամքին մէջ, որովհետեւ մաքրութիւնն ու պահպանումը կ'ընդհանրանան այս կառոյցներուն պահպանման հարցը մէկ մարմինէ միւսը յանձնուելով դադարած է գործնական ըլլալէ,

որովհետեւ առաջինը կը սպասէ, որ երկրորդը ընէ այդ աշխատանքը, իսկ երկրորդը հանգիստ է, որովհետեւ ինք ուրիշին պարտականութիւնը չէր զարգացնել:

Պեղումներու ու շինարարական աշխատանքներու ընթացքին յաճախ կը յայտնուին հին գերեզմաններ, իրեր, կառոյցներու մնացորդներ եւ այլն:

Այս մէկը աւելի եւս կը շեշտէ Լիբանանի հարցատուութիւնը եւ զբօսաշրջիկներ ու յատուկ խումբերու կողմէ գտնուած հնութիւններու կառուցման անոնց տեսնելու համար:

Լիբանանի հնագիտական վայրերու խնամքով սկսած են զբաղիլ նաեւ ուսանողական միութիւնները ու եւրոպական կամաւոր խմբակներ, որոնք լաւապէս գիտակցելով անոնց արժէքին՝ լծուած են աշխուժ աշխատանքի:

Պետութիւնը վերջերս որոշած է իր պիւտճէնէ մաս մը յատկացնել այս նպատակին եւ կազմակերպել յատուկ աշխատանք անոնց պահպանման համար: Սակայն հարցական է այն պարագան, թէ որքանով անոնք գործնական պիտի ըլլան ու իրականանան:

Անցեալ տարուան ուսումնասիրութիւններուն համաձայն, այդ տարուան ընթացքին զգալիօրէն նուազած էր զբօսաշրջիկներուն թիւը:

Մշակութային աւանդներն ու հնագիտական վայրերը իսկական արժէքներ են եւ Լիբանանի մէջ աշխարհը ունին իրենց իւրաքանչիւր գերակատարութիւնն ու իմաստ: Չբօսաշրջիկներուն մեծամասնութիւնը Լիբանան կողմէ զանազան տեսակներու համար եւ անոնց թիւին նուազումը իսկական մտահոգութիւն է եւ ունի իր զրգապատճառները, որոնց առնչութեամբ պետութիւնը պէտք է աշխատանք տանի ու գիտակցելով անոնց արժէքին՝ աշխատանք տանի անոնց պահպանման ու նորոգութեան համար:

ՄՍՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնալու Գաղտնիքները

ԲՈՒԺՈՒՄ ԲՈՅՍԵՐՈՎ

Թէյ խմելը կրնայ նուազեցնել կաթնածխի վտանգները: Չանագան տեսակի թէյերու մասին չէ խօսքը, այլ պարզ թէյին, զոր գրեթէ մեծամասնութիւնը կը խմէ: Հոլանտայի առողջապահական գլխաւոր կեդրոնը ուսումնասիրութիւն կատարեց օրական չորս եւ աւելի գաւաթ թէյ խմող 552 հոգիի վրայ, որոնց տարիքը յիսուսնի եւ եօթնասունի միջեւ էր: Ի յայտ եկաւ, որ անոնց կաթնածխի ենթարկուելու հաւանականութիւնը շատ աւելի նուազ է, քան անոնց, որոնք քիչ քանակութեամբ թէյ կը խմեն:

Թէյին մէջ գտնուող զլխաւոր բաղադրութիւնը, որ ֆլաւոնոյիտ կը կոչուի, չարտօններ, որ արիւնը թանձրանայ եւ հաւաքուի սրտի երակներուն մէջ: Թէյը կը նուազեցնէ նաեւ վնասակար թոլեմթերոլի յառաջացման հաւանականութիւնը: Քոլեսթերոլը երակներու խցման պատճառներէն մէկն է:

ԷՕ. ԿԵՆԱՆԻԹԻ ԲԱՐԻՔՆԵՐԸ

Բրիտանացի ուսումնասիրողներ կ'ըսեն, թէ էօ. կենսանիւթի օրական սպառումը առողջապահական է: Անիկ կը նուազեցնէ սրտի կաթնածխի հաւանականութեան սոկոսը: Ան 40 տոկոսով կը նուազեցնէ կաթնածխի հաւանականութիւնը, բացի այն անհատներէն, որոնք սրտի հարցեր ունին: Անիկ կ'արգիլէ արեան թանձրացումն ու սրտի երակներուն «պատ»երուն վրայ հաւաքուելը:

ԲՈՒՍԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԱԾՔՆԵՐ՝ ՔԱՂՅԿԵՂԻ ԴԵՄ

Սոյալի հատիկները կը պարունակեն ԵՏԻՍԻՍԻՅԵՐԸ բաղադրութիւնը, որ քաղցկեղի դէմ մեծ ազդեցութիւն ունի: Այս տարրը շատ աւելի հանրածանօթ դարձաւ ու թստուականներուն: Ոչ մէկը գիտէր անոր ազդեցութեան գաղտնիքը, սակայն, այսօր, ուսումնասիրութիւնները հաստատեցին ու փաստեցին անոր բուժիչ տրեւելները:

Տոբթ. Ռոս Պէյլթոն, որ հեղինակն է՝ «Թէ ինչպէս կը օգտուի քաղցկեղը հեռացնել» գիրքին, կ'ըսէ, թէ ԵՏԻՍԻՍԻՅԵՐԸ դիմադրողական ուժ ունի քաղցկեղի բնութեան դէմ:

Կարելի է օգտուիլ օրական սպառելով կէս գաւաթ բնական սոյա կամ ուտելով սոյալով պատրաստուած արտադրութիւններ, ինչպէս՝ բոֆու եւ բեմփի:

ՄՆՈՒՆԳՐ ԵՂՈՒՆԳՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Եղունգները առողջ պահելու համար պէտք է ուտել բարձր քանակութեամբ Պէ. կենսանիւթ պարունակող ուտելիքներ: Պէ. կենսանիւթը կը զօրացնէ եւ կեանք կու տայ եղունգներուն:

Անասնաբուժները պիտի տարրին առաւելութիւնը ի յայտ բերին, երբ ուսումնասիրութիւն կը կատարէին ճար մը գտնուելու համար ձիերուն վնասուած եղունգներուն:

ՄԻՏԱՅԻ ՅԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՍԱՆՉՈՂ

ՄԻՏԱ հիւանդութիւնը բնական բոյսերով պատրաստուած դեղերով բուժելու առաջին ուսումնասիրութիւնը տեղի ունեցաւ Միչիգընի Փէյթերը համալսարանին մէջ: Ուսումնասիրողներ փորձեցին պիտի կատարեն այն անձերուն վրայ, որոնք երկար ժամանակաշրջանի վրայ կը հետեւին բնական դեղերու բուժումին: Անոնք յոյս ունին, որ այս ձեւի բուժումը կը դանդաղեցնէ հիւանդութեան յառաջացումը եւ կամ ամբողջովին կը բուժէ զայն: Ուսումնասիրողները պիտի բաղադատեն բնական դեղերու եւ սովորական աւանդական դեղերու հետեւողները, քննելով իւրաքանչիւր խումբին ձեռք բերած արդիւնքը:

ՔԱՐԸ ԵԱՐՏԵԱՆ

2002 ԹՈՒՒՄԿԱՆ ԶԲՕՍԱՆՔԻ ԿԵՐՈՒՆ ԴԱՏԱԿԵՐԸ		
ՀԱՅԳՏԱԿԱՆ ՎԱՅՐԸ	ԶԲՕՍԱՆՔԻ ԿԵՐՈՒՆ ԹԻԸ	2001Ի ԲԱՂԱՏՄԱՆ ԹԻՒՆ ԿՈՒՄԱՆԻՏԻՆ ՏՊԻՍՈՒԸ
Պատկալք	77.594	16.27%
Չարքա	7066	11.60%
Ժիպիլ	45.881	15.10%
Նիսս	883	3.39%
Մայրաք	20.216	24.23%
Թրիփոլի	8260	23.56%
Սուր	10.448	14.54%
Այնճար	21.932	22.70%
Պէյրութի միջին	65.034	0.36%

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՉ

Յառաջիկայ Կիրակի, 18 Մայիս 2003ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ յընթաց Սուրբ եւ անմահ պատարագի, Ծայրագոյն վարդապետութեան աստիճան պիտի շնորհուի Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանութեան անդամներէն, Կաթողիկոսարարի Տեղեկատուական եւ Յարաբերութեան Բաժանմունքի վարիչ՝

ՇԱՐԱԳՅԱՆ ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԶԻՖԹՃԵԱՆԻ

Ծայրագոյն վարդապետութեան աստիճանի տուչութիւնը պիտի կատարուի եւ հայրապետական պատգամը փոխանցուի՝

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Սիրով կը հիւանդուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու եկեղեցական հոգեպարար արարողութեան:

ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ Պատրաստեց՝ ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ



Կնոջական

ՀԱՅ ԱՐՈՒԵՍԱԳԻՏՈՒՄ

Ո՞Վ Է ԱՆԱՀԻՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ



Հայրենի երգչուհի Անահիտ Մանուկյան սիրուած էր գնահատուած երգչուհի Է Հայաստանի մէջ: Լիբանանի մէջ մենք նույնքան ծանօթ չենք անոր: Զինքը ծանօթացնելու նպատակով, ստորեւ կու տանք «Ուղեկից» թերթին անոր հետ կատարած հարցազրոյցէն շահեկան բաժիններ:

«Շնորհակալ եմ Աստուծոյն, որ այսպիսի ծայր մը տուած է ինձի: Այս ժառանգութիւնը հօրմէս է. ան երաժիշտ էր: Երգել սկսած եմ փոքր տարիքէս, երբ զգացի, որ ծայրային տուեալներ ունիմ: Սկիզբը չէի գիտեր ինչպէս մուտք գործել երաժշտական աշխարհին մէջ, որովհետեւ հոն գտնուողները աստուածացուցած եւ կուռքի վերածած էի: Ետքը պարզուեցաւ, որ իմ կուռքերս սովորական մարդիկ են՝ անշուշտ, Աստուծոյ տուած իրենց տաղանդին առաւելութեամբ»:

*
* *
«Ներկայիս, ես շատ աւելի տարուած եմ իմ մասնագիտական հարցերովս, մայրս ինձի կ'օգնէ տնային պարտաւորութիւններու մէջ: Այժմ թէ՛ արտադրող եմ եւ թէ՛ ստեղծագործող, եւ բնականաբար, չափազանց բազմազգացող եմ, այսուհանդերձ կը սիրեմ այլազան ճաշեր պատրաստել եւ հիւրընկալել ընկերուհիներս ու բարեկամներս»:

*
* *
«Ձեռ կրնար ըսել, որ միշտ նոյն ոճով կ'երգեմ: Ես կը փորձեմ ժամանակիս հետ քայլ պահել: Նեմ ուզեր տեղափոխ ընել, երբ ժամանակը առաջ կ'երթայ: Չխախտելով զիս ընտանոցը առանձնապատկութիւնները՝ կը սիրեմ արուեստիս մէջ նոր ուղիներ եւ յաջողութիւններ ներմուծել»:

*
* *
«Կը կարծեմ, որ մեր երգարուեստին մէջ մուտք գործող վատորակ երգերը, երանգները կարճատեւ ժամանակ մը կ'ապրին: Ժամանակ պէտք է, որպէսզի ունենան զիրը զարգացած երաժշտական ճաշակ ունենալ եւ սկսի պահանջել լաւ երաժշտութիւն: Մեր ժողովուրդը կը ծափահարէ եւ լաւ, եւ վատ երաժշտութեան ժամանակ»:

*
* *
«Բազմաբնոյթ՝ քնքուշ, բարի, միեւնոյն ժամանակ բարկացողոտ խառնուածքիս պէս արուեստս ալ բազմա-տեսակ է եւ դժուար է արուեստիս մասին կարծիք յայտնել, որովհետեւ ըսելիքներ դեռ շատ ունիմ»:

*
* *
«Արուեստը մեծ աշխարհ մըն է, որ երթալով մարդուն մէջ կը զարգացնէ եւ կը բացայայտէ նորանոր կարողութիւններ: Այս կարողութիւնները օգտագործելու եւ ճանաչելու համար մեծ ուժ պէտք է: Հաւատքը այն ուժն է, որ կ'օգնէ դիմակայելու շատ դժուարութիւններ եւ կը ստիպէ հաւատալ քու ուժերուդ»:

*
* *
«Մէջը մեծ ազդեցութիւն ունի իմ կեանքիս մէջ, որովհետեւ ամէն ինչ սիրով կ'ընեմ: Առանց սիրելու եղած գործը արդիւնք չի տար: «Իմ կողմէս ունիմ մայր մը, գոր ես շատ կը սիրեմ, ինչպէս նաեւ նուիրուած ու միշտ օգնող ամուսին մը: Կը սիրեմ ընտանիքը, կենդանական աշխարհը, մարդոց, կը սիրեմ նաեւ իմ տանս պատուահանէն դիտել աշխարհը...»:

ՓՈՐՁ-ԸԱՐՑԱՐԱՆ

Ո՞Վ Է ԶՈՂԸ ՁԵՐ ԶԱՓԱԶԱՆՅՈՒԱԾ ՍԻՐՈՅ...

Անսահման սէրը եւ նուիրումը երջանկութիւնն է, բայց զայն ստացողին համար կրնայ մղձաւանջի վերածուիլ... Արդեօք դուք ալ ձեր կարգին նոյն կացութեան կը մատնէ՞ք ձեր սիրած անձը:

1
Ձեր կարծիքով, երջանկութիւնը՝
Ա.- Անցողակի է:
Բ.- Օրէ օր կը նուաճուի:
Գ.- Կու գայ, երբ զայն չենք սպասեր:

2
Առհասարակ ձեր համակրանքը կ'երթայ՝
Ա.- Իշխանութեան գլուխ գտնուողին:
Բ.- Տկարին:
Գ.- Ձուրաճախօսին:

3
Ձեր սիրած անձը գրաւելու համար՝
Ա.- Անկարելի կ'ընէք:
Բ.- Համեղ ճաշ մը կ'եփէք:
Գ.- Գեղեցիկ հագուստներ կը հագնիք:

4
Ձեր ծնողին հետ հեռավոր ծայրով կը կապուիք՝
Ա.- Ամէն օր:
Բ.- Շաբաթը անգամ մը:
Գ.- Քանի մը ամիսը անգամ մը:

5
Եթէ պատկերասփուռի կայանէ մը հրաւէր ստանաք ներկայանալու եւ ձեր սիրտին կեանքին մասին խօսելու՝
Ա.- Հաճոյքով կ'ընդունիք:
Բ.- Հաստատօրէն կը մերժէք:
Գ.- Կ'ընդունիք, եթէ այդ յայտագիրը նպատակի մը պիտի ծառայէ:

6
Ձեր մօր մասին կրնաք ըսել, որ՝
Ա.- Շատ գուրգուրոտ է:
Բ.- Շատ խիստ է:
Գ.- Յաճախ հիւանդ է:

7
Ձեր հաւանած տղամարդը յաճախ՝
Ա.- Չոր ու խիստ է:
Բ.- Ձուրաճախօս է:
Գ.- Չափազանց ազնիւ է:

8
Ձեր ընտանիքին մասին կը խօսիք՝
Ա.- Յաճախ:
Բ.- Երբեմն:
Գ.- Երբեք:

9
Ձեր յարկին վրայ գտնուող դրացիին՝
Ա.- Կ'անտեսէք:
Բ.- Հետը շատ մտերիմ էք:
Գ.- Հետը զուսպ եւ

պաշտօնական էք:
10
Երբ ուրիշներու հետ էք՝
Ա.- Առանձին կը զգաք:
Բ.- Որոշ բարդոյթ մը կը զգաք:
Գ.- Շատ հանգիստ կը զգաք:

11
Երբ արթննաք առաջին բանը որ կ'ընէք՝
Ա.- Տան անասունները կերակրել:
Բ.- «Տուշ» մը առնել:
Գ.- Նախաճաշը պատրաստել:

12
Եթէ ձեր զաւակը թեթեւ ջերմ մը ունի եւ դուք նախօրոք ժամադրուած էիք բարեկամներու հետ՝
Ա.- Ժամադրութիւնը կը ջնջէք:
Բ.- Կ'առաջարկէք, որ իրենք ձեր տունը գան:
Գ.- Մօտիկ անձէ մը կը խնդրէք, որ զայն եւ ձեր զաւակին մօտ կենայ:

13
Ձեր մայրը ձեզ կը մեղադրէ ձեր զաւակներուն հետ թոյլ ըլլալու յանցանքով՝
Ա.- Կը մերժէք այդ մեղադրանքը:
Բ.- Կ'ընդունիք մեղադրանքը, բայց անպատեհութիւն մը չէք տեսներ:
Գ.- Կ'ընդունիք մեղադրանքը, բայց անգործ էք:

14
Գիշերը կը քնանաք՝
Ա.- Ննջասնեակին դուռը բաց:
Բ.- Ննջասնեակին պատուհանը բաց:
Գ.- Դուռ եւ պատուհան փակ:

15
Եթէ շարժ մը առանձին պիտի ապրիք ամառի կղզիի մը վրայ, ձեզի հետ կը տանիք՝
Ա.- Ձեր զաւակը:
Բ.- Ձեր շունը կամ կատունը:
Գ.- Ձեր ամուսինը:

ԱՐԳԻՒՆՔ
Քեք ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը է, որ սիրած անձին հանդէպ ձեր սէրը անթաքաւ եւ անսահման է: Պատրաստ էք բոլոր տեսակի գոհողութիւններու՝ յաճախ անտեղի եւ չափազանցուած: Ընդհանրապէս կը համակրիք այլերու, որոնք փոխանակ ձեր վերքերը դարմանելու կը վերանորոգեն ձեր տանապանքները: Ձեր չափազանցուած սէրն ու

նուիրումը յաճախ կը նեղացնեն ձեր սիրած անձը, որ թթուածիցի պահանջ զգալով՝ խոյս կու տայ ձեզմէ: Հետեւաբար, չափաւորեցէ՛ք ձեր զգացումները՝ չընկեղծու համար ձեր շրջապատը, քիչ մը եսասիրութեան բոլորս ալ պէտք ունինք:

Քեք ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը է, որ սիրած անձին հանդէպ ձեր սէրը անթաքաւ եւ անսահման է: Պատրաստ էք բոլոր տեսակի գոհողութիւններու՝ յաճախ անտեղի եւ չափազանցուած: Ընդհանրապէս կը համակրիք այլերու, որոնք փոխանակ ձեր վերքերը դարմանելու կը վերանորոգեն ձեր տանապանքները: Ձեր չափազանցուած սէրն ու


	A	B	C
1	■	●	▲
2	■	▲	●
3	●	▲	■
4	●	▲	■
5	■	●	▲
6	■	●	▲
7	■	●	▲
8	●	■	▲
9	■	▲	●
10	■	●	▲
11	▲	■	●
12	▲	■	●
13	●	▲	■
14	▲	●	■
15	●	▲	■

առաւելաբար հանգիստ կը զգաք: Անոնց հետ ժամերը վայրկեաններու պէս կ'անցնին... Բայց անգամ մը, որ անոնք կը հեռանան, կը բացակային, դուք ձեզ դժբախտ կը զգաք եւ կեանքը անիմաստ կը դառնայ: Ձեր այս չափազանցուած սիրտը արդիւնքը, ձեր զաւակները գերպաշտպանուած են, իսկ ամուսինը՝ լքուած... Չափաւորեցէ՛ք եւ կարելի եղածին չափ հակակշռեցէ՛ք ձեր զգացումները, ձեր շրջապատէն իւրաքանչիւրին տուէ՛ք իր արդար բաժինը, ոչ չափաւոր եւ ոչ չափազանց:

Քեք ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը է, որ սիրած անձին հանդէպ ձեր սէրը անթաքաւ եւ անսահման է: Պատրաստ էք բոլոր տեսակի գոհողութիւններու՝ յաճախ անտեղի եւ չափազանցուած: Ընդհանրապէս կը համակրիք այլերու, որոնք փոխանակ ձեր վերքերը դարմանելու կը վերանորոգեն ձեր տանապանքները: Ձեր չափազանցուած սէրն ու


«ՈՒՈՔ»Ի ՄԷՋ ԵՓՈՒԱԾ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

Վերջին տասնամեակին շատ ընդհանրացած եւ փնտրուած են չիմացուած ճաշերը, որոնց մէկ կարեւոր մասը կ'եփուին «ուոք» (wok) կոչուած խոշոր եւ կոր մէջ: Հանրախանութեան բնուէն եւ ապակեղէն ծախող վաճառատուներուն մօտ կրնանք գտնել տապակի այս տեսակը, որ պատրաստուած կրնայ ըլլալ զանազան մետաղներէ:



«Ուոք» տապակի մնուլ մը

«Ուոք»ին առաւելութիւնը այն է, որ քանի մը վայրկեանի մէջ եւ շատ քիչ իւղի մէջ կարելի է եփել առողջապահական համեղ ուտելիքներ: Թեյադրելի է, որ քիչ քանակութեամբ դրուին ուտելիքները նախապէս լաւ տաքացուած «ուոք»ին մէջ, եւ տեւաբար խառնուին՝ փայտեայ տափակ դգալով մը:



Բանջարեղենները ձեւաւոր եւ համաչափ կտրտել

«Ուոք»ը կափարիչ չ'ունենար, բանջարեղէնները եւ մնացեալ ուտելիքները կ'եփուին «բացօթեայ» սկսելով ամէնէն դժուար եփողէն եւ վերջացնելով ամէնէն արագ եփողէն:

«Ուոք»ին մէջ եփելիք մեր ուտելիքները պայման է, որ կտրտուին բարակ, ձեւաւոր եւ համաչափ ձեւով, այնպէս ինչպէս նկարը ցոյց կու տայ:

- Ստորեւ կու տանք «ուոք»ի մէջ պատրաստուող բանջարեղէնի կերակուր մը:
- Բաղադրութիւն՝ 4 անձի համար:
 - ◆ 200 կրամ ոչ հասուն լոլիկ
 - ◆ 100 կրամ կարմիր թարմ պղպեղ
 - ◆ 100 կրամ կանաչ թարմ պղպեղ
 - ◆ 200 կրամ դդու
 - ◆ 200 կրամ սմբուկ
 - ◆ Պեղ մը սխտոր
 - ◆ Ռեհանի 12 տերեւ
 - ◆ Ապուրի 4 դգալ հեղուկ սեր



- ◆ Հաւկիթի դեղնուց մը
- ◆ 50 կրամ տաշուած «փարմըզան» պանիր
- ◆ 2 - 6 ապուրի դգալ ձիթախոլ
- ◆ Աղ
- Պատրաստութիւն:
 - Ձեթը տաքցնել «ուոք»ին մէջ, ապա մէջը դարձնել բարակ մատիկներու վերածուած դդուներ: Դդուները հանել եւ մէկ կողմ դնել, քիչ մը ձեթ աւելցնել եւ այս անգամ մէջը դարձնել խորանարդաձեւ կտրտուած սմբուկները: Նոյն գործողութիւնը կրկին պղպեղին եւ վերջապէս լոլիկին հետ:
 - Հաւկիթին դեղնուցը «զարնել» հեղուկ սերին եւ պանիրին հետ:
 - Մանրէլ ուսանի տերեւները:
 - Պարապ «ուոք»ին մէջ դգալ մը ձիթախոլ տաքցնել, աւելցնել ճգմուած սխտորը, ապա նախապէս ձեթին մէջ դարձած բանջարեղէնները աղի եւ համեմել:
 - Հաւկիթով թացանը պարպել բանջարեղէնին վրայ եւ զգուշութեամբ խառնել:
 - Փոխադրել ներկայանալի ամանի մը մէջ, երեսը զարդարել մանրուած ուսանիով եւ տաշուած «փարմըզան»ով:
 - Ասոր կողքին կարելի է հրամցնել մսեղէն մը կամ ձկնեղէն մը:
 - Այս առիթով ըսենք, որ «ուոք»ին մէջ եփած բանջարեղէնները պէտք չէ որ շատ եփին եւ խաշածի տպաւորութիւն ձգեն: Անոնք մեր ակուսին տակ պէտք է քիչ մը «կտրտուին»:
